



## ԹԱՐԴՄԸՆՈՒԹԵԸՆ ՃԾՎԱԿԱՆԵՐ

«Ֆարրարի քարողների» առիթով անոր-Դարիո մէջ արծարծուեցաւ թարգմանութեան արուեստի խնդիրը. Թերթի մէջ թեր և դէմ բաւական դրուեցաւ անպտող կերպով, առանց լուսաբանութիւնն առաջ մղելու, անժամանակ խնդիրը սպառուած համարուեցաւ, փակուած վիճարանութիւնը մի անգամ էլ շարունակուեցաւ, ի վերջոյ բանն արնպէս տարտամ վիճակի մէջ մնաց, խնչուս որ սկզբումն էր. Արդեօք որի չնորհիւ խնդիրն արապէս մեռեալ ձնուեցաւ, փոլթ չէ ինձ համար, միայն ես անլիճնելի եմ համարում, թէ կենսական է ալդ խնդիրը մեր դրականութեան համար, որ քիչ է արտադրում ինքնուրովն գրուածքներ. իսկ իւր խեղճ կեանքը վարում է առաւելապէս թարգմանութիւններով:

Թարգմանութիւնը սերտ կապ ունի լեզուի հետ. Այժմ ամբողքը դժո՞հ են մեր աշխարհաբար լեզուից, բայց ոչ ոք քաջութիւն չունի դրականական ռարաննեւմք հանդէս զալ և իրօք նպաստել խնդրի լուծման և ոչ թէ խեղկատակի դեր կատարել. Լ. Ստրանեանի դասագրքի լեզուն չեն հաւանում, նա խռովում է և ասում է, թէ քննադատութիւնը թշնամութիւնից է ծագել. խնդիրը սպառուեցաւ: «Հանդէս Ամսօրեան» «Մշակի» լեզուն չի հաւանում, «Մշակը» հայնուում է և բուն վիճարանութիւնն անպատասխան է թողնում. խնդիրը սպառուեցաւ Միսիթարեանները Վիէննալից Վենետիկին, Վենետիկից Վիէննալիին վիրաւորում են ասդի ծակոցներով և խնդիրը փակում են. Վերջապէս տաճկահալերն էլ սկսել են նոյն օրինակ սաստիկ դժո՞նութիւններ բախնել իրարից, բայց արնպէս, որ մի խենդի ծգած քարը փոսի մէջ՝ հանել չպիտի կարողանան տասը իմաստուններ դարձեալ խնդիրը փակում է: Ակագան գանդատաւորների մէջ դատաստան կտրողն ովկ պէտք է լինի:

ինչու մեր մթնոլորտք միշտ պղտորուած է և մէջը լոլս չի ափուում: Խճճուած կծիկը բաց անելու համար՝ արդեօք ընդունակութիւն թէ կամք է պակասում մեզ: Մի մեծամիտ լանդգնեցաւ պնդել, թէ մեր գրականութեան 'մէջ չկալ 10 հատ լաւ թարգմանութիւն, որ օրինակ համարուին մեղ՝ թարգմանիչներիս համար: Ի՞նչ է պատասխանում նորան ամենօրեալ թերթի խմբագրութիւնը, հասարակաց կարծիքին ուղղութիւն տուողը. ևթէ մի հատ էլ չունենանք, դու պարտաւոր ես լաւ թարգմանելոյ: Այս պատասխանը ծովը մարդու և աչքի մէջ թող փչողի պատասխան է, որ փոխանակ իւր գրադարանը բաց անելու, ուր որ թարգմանիչներից ձրի եկած մի մի օրինակ գրքեր կան (եթէ խնամով պահուել են), և փոխանակ 10 վերնադիր արտագրելու և մնամատի աչքը կոխելու, նանում է իւր ծուլութիւնն ու թանձրամութիւնը ֆրազով և նէլնիմով քողարկել: Խակ լրագրի ընթերցողն ինչ իմացաւ, նա շատ բան կարդաց թեր և դէմ, բայց այն չիմացաւ, թէ վիրաւի ունինք արդեօք 10 լաւ թարգմանութիւն: Եւ ինչպէս իմանալ ընթերցողը, երբ որ ինքը խմբագրութիւնն իրան հաշիւ ու համար չի տուել արդ մասին: Եթէ շատերի համար ալդ հարցմունքը առեղծուած է, ես ասել եմ և դարձեալ պընդում եմ, որ ռուսահալոց թարգմանական հմտութիւնը խիստ անմշակ է մնացել, և ալդպէս էլ պէտք է լինի, եթէ ի նկատի առնենք մեր մամուլի թերմել վերաբերմունքը ալս արհեստին. ապացուց՝ մեր ամենօրեալ թերթերի վերջին երեսները, ուր որ ամենայն օր ընծալում են հեռագրական լուրերի, գծի տակ թերթոնների, քաղաքական լոգուածների և մասնաւոր անձանց լայտարարութիւնների անփիղծ թարգմանութիւնները, ամօթ համարելով դէմ. ալդ մասում տաճկահակերից բան սովորելու: Պէտք է զարմանալ, թէ որչափ անհետեղութեամբ մեր ամեն կարգի խմբագրութիւնները մի երեսում ամպրոպ են, հանում և շանթեր են թափում թարգմանիչների գլխին, դաս և խրատներ են կարդում ալնպիխներին, որոնց աշակերտ կարող էին լինել, իսկ միւս երեսում իրանց հիանալի թարգմանութեանց մարդարիտներ են չարում:

Նախ քան առաջ գնալը, հաբկ եմ համարում խոստովանել, թէ մեր մէջ ինչնուրոյն գրութիւնը, լեզուի տեսակէտից, բաւական առաջ է դնացել. ապացուց՝ ալմետան և տարիներ առաջուակ «Մշակի» թերթերը, ուր որ ամէն տեսակ խառնի-

ճաղանճ լեղուի հետ՝ հալ-քրիստոնէի լեզու ևս հնչուում է: Եւ ուրեմն կարելի է, թէ ոմանք մեղադրեն իմ ծալրակեղ լոռետեսութիւնը: Բայց ես խօսում եմ ոչ թէ ինքնուրուն շարադրութեան՝ ալլ թարգմանութեան մասին: Վերջինս իրօք որ լառաջաղիմութիւն ցուց չի տալիս, ալլ կարծես թէ տղեղութիւնները մինչն անգամ սրբացնում են ուուրագործում է, մինչդեռ առաջ տղեղը հէնց «տղեղ» էլ կոչւում էր, ևս թարգմանութեան շատ քիչ ենք պատահում. բայց վաղուց է, որ ախաղիսի վարժ թարգմանութիւն չենք կարդացել, ինչպէս որ էր անցեալներում «Մշակիո մէջ տպուած մի կտոր թարգմանութիւն ուսերէնից—Թիֆլիսի բաղանիքների մօտ գտնուած անառականոցների մասին»: Երեսում էր, որ ալդ կտորը շտապովէ թարգմանուած, բայց ամէն տողից նշամարում էր գրչի հըմտութիւնը օտարի միտքը հակերէն լեզուով արտալատելու շնորհքը: Ահա մենք ալդպիսի թարգմանութիւններ ենք փընտռում, բայց չենք գտնում մեր արևելեան հալոց դրականութեան մէջ:

Թարգմանութեան անկեալ վիճակը առընչութիւն ունի երկու հանգամանքի հետ. մէկ ալն, որ մեր մէջ ուսումնական գուհը էլ չեն տպագրուում, երկրորդ ալն, որ հայոց մամուլը մեր կորչէնցիւնցին մնունդ չի տալիս: Ալդ երնութիւններից որն է պատճառը և որը՝ հետեանք, ես չեմ փորձի որոշել, ես միայն իրողութիւնն եմ արձանագրում: Մեզ կառարկեն, թէ լուսաւորեալ աշխարհի բոլոր զրականութիւններում զրքերի թիւը պակասում է, պարբերական թերթերի բաղմանալու համեմատութեամբ: Սակայն այս առարկութիւնը թիւրիմացութեան ծնունդ է. ոչ մեր երկու և կենտ թերթերը բաղմացած կարող են համարուիլ, և ոչ էլ մեր զրքերի ուսուուլու մասին է խօսքը, ալլ մեր ցաւը ախաղիսիների խսպառ դադարումն է, ևսկ աւելի ուշադրութեան արժանի հանդամանքն ալն է, որ նւրուպալում զրքերի նիւթը՝ պարբերական թերթոններումն է աեղ գտնում: Իսկ ալդպիսի պաշտօն մեր թերթերը չեն կատարում: Մի երեսուն տարի առաջ եթէ մեղանում մի գիրք հրատակուէր, այն ձեռք կը բերէր և կը կարդար, կամ գէթ հարեանցի կը թերթէր և բժիշկը, և' փաստաբանը, և' աստիճանաւորը, և վաճառականը: Ալժմ էլ ոչ չի հետաքրքրուում, թէ որ ապարանից ինչ զիրք է լուս գալիս: Մինչն անգամ սեահողի ասպետներ հանդէս կը գտն, բացարձակ քարողելու

որ դիրք չհրատարակուի, իսկ հրատարակուածը չը կարդաց-  
ուի. Մտեք ոռուաց խմբագրատուն, իսկոյն խմբագիրը ձեղ  
ցոլը կը տալ մի գիրք, ասելով. «Ահա մի շահազրդիո գիրք,  
կարդացէք. Սա երիտասարդ փիլիսոփակ Գիւլիօի շարադրու-  
թեան ռուսերէն թարգմանութիւն է, անունն է Դաստիարա-  
կութիւն և Ժառանգականութիւն»: Եւ դուք կը կարդաք երկու  
պատճառով, նախ՝ որ ձեղ լանձնարարել է ոչ հայ խմբագիրը,  
երկրորդ՝ որ հայերէն թարգմանութիւն չէ: Բայց թող ո. Էջ-  
մբածնի տպարանից լուս տեսնէ նոյն գիրքը հայերէն թարգ-  
մանութեամբ, դուք ալդ մասին բնաւ տեղեկութիւն չէք ու-  
նենայ: Եւ եթէ մի քանի տարուց լետով մեր զրասէր բժ. Բու-  
դուղեանցը ճիշդ նոյն վերնազրով (Ժառանգականութիւն և  
զաստիարակութիւն) մի տեսարակ հրատարակէ, ոչ նա և ոչ  
դուք չէք իմանալ, թէ ոյտ անունով արդէն վաղուց ունինք մի  
հասա գիրք, ո. Էջմիածնի տպարանում տպած: Խոնչպէս էք  
հաւանում մեր ազգակին լառաջաղիմութեան ալսպիսի կողուու,  
Ազագավը բաւական չէ, ալլ մեր միամիտ իմբէքութիւններն էլ  
չնորհակալութեամբ կը ստանան պ. Բուդուղեանցից ալն տես-  
րակի ձրի օրինակը, չհասկանալով, թէ մի տան մէջ մի ա-  
նունով երկուորեակներ ենք ունենում, և չիշելով, թէ ար-  
դէն մի քանի տարի առաջ նոյնպէս չնորհակալութեամբ ստա-  
ցել են ալժմեանի երկուորակիցը: Մենք տակաւին առողջ  
դաստիարակութիւն չենք կազմում, ալլ իւրաքանչիւրս մի մի բնե-  
րում նստած, աւաղի վերակ ենք կանգնեցնում ամրոցներ: Մենք աշխատողներ ենք, բայց ուրիշի աշխատութիւնը լար-  
դող չենք:

Գրական երկերի նկատմամբ ալսպիսի վերաբերմունքը  
նոր չէ. մեր մամուլը վաղուց լուսաւորութիւն է քարողում  
համարակ ժողովրդեան համար մալրենի լեզուով, իսկ ինտելի-  
գենցիալի համար հերիք է համարում օտար լեզուների աղ-  
քիւրը: Ինտելիգենտը սոսկականին ասում է. «Դու կարդա հա-  
յերէն, քո խելքի համար ալդ լեզուն բաւական է, իսկ ես իմ  
անձիս համար հայերէնի կարիք չեմ զգում, ես լուսաւորուած  
եմ: Քո խելքի բան չէ Դիւլիօ կամ Ֆարրարը, ալդպիսի հաստ  
գրքեր թող տպարանի շտեմարանում անկտրում կուտակուած  
մնան, ոչ քեզ և ոչ ինձ են հարկաւոր, դու կարդա մեր առաջ-  
նորդողները, որ քեզ համար և՝ քարոզ են, և զաստիարակու-  
թիւն...» Ինտելիգենցիան ժողովրդին առաջարկում է ալնպիսի

միջոց (մալրենի լեզու), որ ինքը արհամարհելով արհամարհում  
է: Հասկանալի է, թէ ինչ պէտք է լինի արագիսի կեղծ բա-  
րեպաշտութեան հնտեսանքը. ծառ ի պաղոյ իւրմէ ճանաչի,  
ժողովուրդն էլ, բայցի բամբասանքներից, ուրիշ բան չի կար-  
դում, նա ինտելիգենցիալից նախ և առաջ սովորում է արհա-  
մարհութիւն: «Մեր ընթերցող հասարակութիւնը, ինչպէս որ  
կասէր ինտելիգենտը, զո՞ւ է դասնում ցեղական միմիկրիէ  
(կապկութեան), ալսինքն օտար տիպարի վատ պատճէն չէ  
ձևացնում: Նթէ ուրիշ ազգերի մ.ջ մալրենի լեզուով են լու-  
սաւորում ժողովրդեան, և մենք էլ նոցա օրինակով ենք ու-  
զում ընթանալ, մենք մոռանում ենք, որ ախ տեղ նախ և  
առաջ իրանք լուսաւորողներն են լարգում, սիրում և ճոխա-  
ցնում ախ լիզուն: Այս ընթացքն ալլ է, քան մեր փոխ արա-  
ծը, ուստի և մեր ծառի պատուղը դառն է: Մեր ինտելիգենտը  
երբէք չնորհակալութիւն չի լաւտնի, թթէ իրա համար մի գիրք  
հրատարակէք. թող մի եպիսկոպոս Դրեսլէր թարգմանէ, մեր  
քուրմենը կը ծիծաղեն, թող մի աշխարհական քարոզներ  
թարգմանէ, մեր հաւատաքննիչները խարոյկ կը շինեն քա-  
րոզներից, թող մի թարգմանիչ քաջութիւն ունենալ ցուց տա-  
լու ողորմելի ինտելիգենտներին, որ կարելի է գողարիկ հա-  
լերէնով արտակատել Փրանսիացու նուրբ, թեթև և զեղեցիկ  
ոճը, Փրանսիական բարձր սալօնի գեղեցկախօսութիւնը, այդ  
սոխակին մեր վալրենիները կասեն, թէ եկ, մեր խոռողից  
սովորիր թարգմանելը. Մեր ինտելիգենցիան ոչ միայն հալե-  
րէն զիրք չի կարդում, ալլ իւր մտաւոր պահանջների համե-  
մատ պարբերական թերթեր էլ չի հիմնել Ալսպիսի թերթ  
լինելու է ձգուում փորձի համար, զոր օր. «Հանդէս Ամսօր-  
եան», որ գրեթէ դադարելու վերալ է, հարկաւոր չափով բա-  
ժանորդ չունենալու պատճառով: Նթէ մենք վալրենի ժողո-  
վուրդ չենք և հոգնոր շահերով ապրելու ընդունակ ենք, ալսպիսի-  
թերթից զրկուիլն ինտելիգենցիալին վիշտ պէտք է պատճա-  
ռէք: Բայց ինտելիգենտը չարախնդութեամբ ինչ խրատներ-  
տալ չարաբաստիկ Հանդիսին. «Դուռ ուզում ես մեզ՝ ինտելի-  
գենտներիս լուսաւորել, քեզ՝ համար պահիր քո լուսաւորու-  
թիւնը. արի քո բարձրութիւնից իջիր մեր մակերեսութը, մեր  
պէս զարդակ խրատներ քարոզիր, և ախ ժամանակ կը վալե-  
լես մեր աջակցութիւնն ու քաջալերութիւնը»:  
 Փորձեցէք մեր ինտելիգենտին լաւտնել հալերէն լեզուուն

մի ուսումնական նորութիւն, զոր օր. թէ հողեբանութիւնը քալ առաջ է զնացել երազի մեկնութեան մասում։ Նա ալդ բանով չի հետաքրքրուի, մինչև որ հաստ ժուրնալներ չըստանալ, մինչև որ իւր բիբլիան չկարգար իսկ եթէ հակերէն լողուածը կարդալ, ալդ քաջութիւնը կը գործի ոչ թէ բան համանալու համար (որպիսի ընդունակութիւն արդէն կորուսած ունի, երբէք հակերէն առաջական լեզուին վարժուած շվինելով), ալ որպէս զի իւր քաղաքացիական պարտքը կատարէ և հայրէն լողուածն առանց քննադատելու չթողնէ, ալսինքն առանց աքացի տալու չթողնէ։ Ակսեղ նա անպատճառ երեք անշնորհութիւն պիտի զործէ։ նախ՝ լեզուն կանուանէ գրաբարախառն, ալսինքն թէ վատ է (ալս ամենից հեշտ գործէր), երկրորդ՝ խրատ կը տալ, թէ որ խոռոշից զասեր առնենք (ալս եւ իւր սրտին եղ քսելու համար է), երրորդ՝ բուն նիւթի մասին ձախն ծպտուն չի հանի (հէնց լեզուի մասին խլացնող թմրկահարութեամբ զատաստան անելու խորամանդ նպատակն ան էր, որ թմրկահարողի հիմնական տղիտութիւնը ձածկուի)։

Թէ ինչպէս է կաղմուել ալս Աւգեան ախոռը, բաւական է մի ակնարկով պատկերացնել ալն աւաղանը, որի մէջ որ մլրապուել են մեր սրտացաւ առաջնորդողները, Մեր մամուլը խիստ սրտաշարժ կերպով նկարազրում է բարձրագոյն կըրթութեան բարենորդումները, իսկ թէ մինչև ալսօր ալդ օր բանից նրանից տարերք են մտել մեր առաջնորդող մամուլի մէջ, ալս մատին մարդիկ ամենալն խոնեմութեամբ լռում են, կարծես թէ հէնց իրանք ո՞ի հրաշալի բացառութիւն են կաղմում և բոլոր արատներից զերծ են մնացել, թէսէտ միհնոյն բոյալուածն են ներկուելու Ակն մարդիկ, որոնք հաստ ժուրնալներ կարդալով, բուռն սէր են ստացել ժողովուրդը լուսաւորելու համար, բայց էման պրծնելու համար՝ գիտութեան սէր չեն ստացել, լուրջ կերպով աշխատելու ընդունակութիւնը ձեռք չեն բերել, — ինչպէս պէտք է ծառակեն մի ժողովրդեան, որի լեզուն չդիտեն։ Նոքա ալս բանից ամեննեին չեն քաշւում։ սահման քաջաց զէնք իւրեանց, նոքա իրանց փոխ առած և կցկցած իդէաների համար հերիք են համարում և ալնչափ սակաւաթիւ բաւերի խոնուկ պաշարը, որ քաղում են մեր լրադիրներից, վերան աւեացնելով ռուսաց քերականութեան կը-

նիքը և եւրոպական տերմինների անմարս խառնուրդը Ասսպէս է թխում մեր աշխարհաբարը:

Որովհետեւ ամենաքիչ աշխատութեամբ է ստեղծւում ալսալիսի միջազգալին հայերէնը, ալսալիսի վօլապլիւկ հայերէնը, դժուար է երեսակալել անդամ, թէ տղալական հանաքը որչափ ծանր հետեանքներ է առաջ բերում, Անձնապաստան լեզուն արհամարհում է կորուշակուռուս-ինը, արհամարհում է Միխիթարեանների դաս տուած Եսուսնուբեան օքնուէ, արհամարհում է նաև փոքր ինչ չոնոնառ աշխարհաբարը, որ նոյն արհամարհած գործնների աղղոցութեամբ է ձևացել. և ալս ալսպէս էլ պէտք է վլնի, վասն զի, բնական օրինոք, բարբարոսական խրթնութիւնը չի կարող համբերել մշակուած և հարուստ լեզուն:

Յափշտակութիւնն ալն պակասութիւնն ունի, որ յանկարծ բռնկուելուց լետոլ, շուտ էլ անդնում, սառչում է: Մեր երիտասարդը երիտասարդ է առաւելապէս ալդ պակասաւոր կողմով: Նա տակաւին ուսանողական նստարանի վերալ բուռն ցանկութիւն է ստանում իւր սովորածները մալրինի լեզուով արտալալտելու, և լուսաւորիչ հանդիսանալու: Սական իւր լեզուն անկատար է: Իդէաներ կան, արտալալտիչ գործիք չը կար. բնչ անէ նա: Երիտասարդը վեր է առնում Աւետարան, Սղնիկ, Խորենացի—բայց գրաբարը ծանօթ առեղծուած է, ուրեմն ոկու է քերականութիւն սովորել, պէտք է ուշորէ... Նա փորձում է իւր աշխատութիւնը հեշտացնել. գիտէ լունարէն, լատիններէն և ուրիշ լեզուներ, ուստի և զիմում է Միխիթարեանների թարգմանութիւններին, բաց է անում Հոմերոս, Սոփոկլէս, Վերգիլիոս, Կիկերոն, Տակիտոս, Միլտոն և ալլն: Սական ալստեղ էլ մտադրութիւն է պահանջնում, պէտք է բառ առ բառ, նախաղատութիւն առ նախաղատութիւն համեմատել ընազիրը թարգմանութեան հետ, պէտք է ուշորէ... Նա փորձում է զանց առնել գրաբարը, գիմում է աշխարհաբար զրուածքներին, կարդում է Ավտունեանի Գննական քերականութիւնը: Այս հաստափոր գիրքը աւելի տաննլի է թըւաւմ, սական զարմանալի կերպով կարդալուց լետու գլխում բան չի մնում, պէտք է աշխատել... Վերջապէս փորձում է կարդալ Աբովիանի Վէրք Հարաստանին—կիսաստուած Յարովի խորհրդով (որ ակմ ոչ թէ կէս, ալլ ամբողջ դե է համարւում մի և նոյն բանակում): Ակստեղ գալթակղութեան վկմ է դառ-

նում գրքի հենց տռաջին երեսը. տասն անդամ միևնուն երեսը կարդալիս, բնաւ չի պարզուում շարադրութեան կապակցութիւնը... ուրեմն ալստեղ էլ հարկաւոր է աշխատել... լուրջ աշխատել...

Շուարած երիտասարդուների համար անակնկալ օգնութիւն է հասնում. Ամբոխի միջից ձախն է լսում. սթող կորչի գրաբարը, թող կորչին Վենետիկի և Վիչեննալի պքոլասարիկները, թող կորչի Ար... Վէ... (լեզուն կակազում է), թող կորչին գրաբարախառն գրիչները. Յալտնի է, որ մէկի հրաւէրը, թէ են եր, ուուր կինծին, ինչպէս է ներգործում անհամըերութիւնից ելեքտրացած ամբոխի վերալ... Եւ ահա ինտելիգենտ-երիտասարդի լեզուն բացուեցաւ, և նա սփենց միջազգալին-վուլապիկ հալերէնը. Իսկ երբ որ լուրջ աշխատութիւնից փախչող երիտասարդը ինքնաստեղծ դառնալ, այն էլ լալտնի է, թէ ինչ պիտի լինի նորա ստեղծածը.—Լրադրի աղքատ բառարան, օտարի քերականութիւն և Լորլալի ժամանակների հալածանք հարազատ մալրենի լեզուի դէմ:

Ահա այն ժամանակից սկսուեցաւ մեր դրականութեան անկումը, որ նոր էր ծլում. Այն ժամանակ մեր դրականութիւնը և ինտելիգենտի և ժողովրդեան դրականութիւնը դառնալու սկիզբ էր առնում, այժմ մեր ինտելիգենտը մալրենի լեզուով դրականութիւն չունի իւր պէտքերի համար և չի էլ ուզում ունենալ: Միթէ գոենիկ ժողովուրդը կըլարգէ այն զըրականութիւնը, որ ընծալողի աշխում գրօշի արժէք չունի: Խարերակեալը բարերարից նախ և առաջ կըսովորի արհամարհութիւն և էլ ոչինչ չի կարդալ, եթէ զրուածքը իւր ստոր ճաշակներին չհամապատասխանի:—Մի երկու մանր նըմուշներ բերենք, ցոլց տալու համար, թէ ինչպէս հալերէնը արհամարհուած է նախ և առաջ ինտելիգենտի կողմից:

Տարիներ առաջ հայերէն շեղուով ծանուցուեցաւ, թէ կարկըտի դէմ կուուել կարելի է, սանտաձեւ ումբընկեցները պարզելով դէպի կոտակուած ամպերը: Մեր ինտելիգենտը հալոց դրականութեան եղած կամ չեղած լինելը՝ միենուն համարելով, այն տեղեկութիւնից չօգառուեցաւ, որպէս զի իւր սիրած ժողովրդեան համար առաջնորդողներ գրէ: Բայց նորերս ուսմաց հաստ ժուրնալներում կարդաց միենուն ծանօթութիւնը, և իսկուն առաջնորդողներ թխեց, միամտաբար հինը նորի տեղ ծախելով:—Հալոց պատմութեան մտախն խօսելիս, մեր ինտե-

լիդենտը չի վրիպի և Խորենացու պատմութիւնը առասպելաբանութիւն կանուանէ, մնծարանելրվ; թէ գիտութիւնն արդին բեռնածեն արձանադրութիւններից հանել է բոլորովին զատպատմութիւն, Դիտութեան անունով ալսովէս ջարդողները իրանց համար աւելորդ են համարում մի փոքր բան—նոյն խակ գիտութեան տէր զառնալը. իրանք խօսում են գիտութեան մասին, խակ գիտութիւնը թողնում են ուրիշների ձեռքում: Եղբակալեցէք, որ մեր մէջ բնեռագիր կարդացող մէկը չկայ. մինչդեռ այս այն հմտութիւնն է, որ կարելի է հասկանալ երմբունել... մինչեւ որ մի պատիրոս ծխուի և մօխիր զառնալ: Զուարթնոց նկեղեցու աւերակներում գտնուեցաւ բնեռաձև արձանադրութեան մի մնծ կոթող. «Օ, գիտութեան համար մեծ զիւտ, մնծ զիւտ է», հնչուեցաւ զարդակ կարամներից, խակ գէթ մի կարդացող չդանուեցաւ, մինչեւ որ օտարներն ու Բասմանեանը օգնութեան ցասան: Թերևս միզ ընդդիմախօսեն. ամիթէ Բասմանեանը հաւ չէ. ալ՛, հաւ է, բաց ոչ ալն աւաղանում մկրտուած, որի մասին որ մենք խօսել ենք: Մեր արիստոկրատ ինտելիգենցիա իւր գիտութիւնները բերան անել և քաղել զիսէ երկրորդ ձեռքերից—հաստ ժուրնալներից, էնցիկլ. բառարաններից, «Братская помошь»-ից, խակ բուն աղքիւրից օգտուիլը թողնում է Բասմանեանների պէս սև հաց ուստող մշակներին: Սիակն «Հանդէս Ամսօրեան» բուն աղքիւրներից ռւասիրի Ուրարտուիր պատմութիւնն է տալիս. ով, ինչ ձանձրալի ընթերցանութիւնն...

- «7. Ելամացի Խումբանիդասին՝ գորութիւնը խորուակեցի, Կարալում և Սուրբս երկիրները, ոիշիսիմ և Խարխար քաղաքները ոչնչացաւցի, Մեղացաց աշխարհին վերալ՝ մինչ 8. չկ նիկնի լեռն և նիկուլ երկիրը՝ Ասորեստանի լուծը ուրի: Ուրարտու երկիրն աւերեցի. Ասձածիր քաղաքն աւարեցի. Անդիա և Զիկիրտու երկիրները կրծանեցի և ալլն, և ալլն. և ալլն...»

Մեր ինտելիգենտը ոչ «Հանդէս Ամսօրեան» և ոչ Աբանաւէքրա կը կարդա, թերթերն անգամ չկտրելով (գոքա «Համերէն են»), ալլ կը պապասէ, մինչեւ որ մի տքնող ճզնող ոռու, գերմանացի և անգլիացի ասորեստանեան և պարսիկ, Վանալ և Զուարթնոց եկեղեցու և միւս բոլոր սեպածն արձանագրութիւններից մի ոճով բանակարգութիւն և կոկիկ շարադրութիւն ձևացնէ... ահա ժամանակ կը կարդա, ինչու չէ: Նա սիրում է պատրաստ աշխատութիւնը, թողնելով որ անմշակ

նիւթը ուրիշի ձեռքով մշակուի. Նւ քանի նա կլոռւէիւն կանչէ, իմանաք, որ աղստիս է նորա գիտութիւնը. — Մեր ինտելիգնուող ոչ միայն հալերէն լեզուով գիտութիւն չի մշակում, այլ մշակուած գիտութիւնը ժողովրդականացնել չի կարողանում. Նա որ պղնձէ փողերով հնչեցրել է Դարուինի և Նիշէի հոչակը, մինչև ալսօր շնորհքով գրուածքներ չի արտադրել արդ կուռքերի մասին. Նա աղնուութիւն էլ չունի խոստովանելու, թէ ալդպիսի սխրագործութեան համար զարգացած լեզու չունի, մինչդեռ ցած հողուով ծաղրում է գրաբարախառն լեզուով թարգմանիչներին, որոնք որ չէին գծուարանալ նորա պականը լրացնելու, կարելի է, թէ մենք շատ բան պահանջեցինք, որ հայեւն լեզուով գիտութիւն հշուած և դիտութիւնը ծովով: Շալց մեր ինտելիգենտը հալերէն լեզուով գիտութիւն ուցրել են կարողանում, Նա սիրով կըկարդաւ հալերէն թերթերից մեր բամբասանքները, մեր վէճերը, մեր լիցոցարանութիւնները, մեր անուանարկութիւնները, բայց մի տատուածքանական լոգուած (տարէն մի անդամ, լունուարի 1-ին քրիստոնէական սիրու մասին առաջնորդող գրելու համար), մի փիլսոփիալական լոգուած, մի հոգեբանական հետազոտութիւն, նորն իսկ հալ օրաթերթի հեռագիր՝ երթէք: Ազք բաների համար նա բաց կանէ ռուսաց թերթեր: Սակայն դժբաղդաբար կան մի քանի ճիւղեր, որ օտար լեզուով չեն գրուի, այլ միայն հալերէն են գրուել: Մեր ինտելիգենտը երդուել է արդ բաները երբէք չկարդալ և չուսումնասիրել: Հայոց պատմութեանը ինդէլէնու ուսուցիչը (ունինք և ալդպիսիք) այն պատմութիւնը չի ուսումնասիրի հակական աղբիւրներից, պարզ այն պատճառով, որ հալերէն կարդալ չգիտէ, բայց նա կըպատճառաբանէ, թէ հալք արդ ճիւղը չեն մշակել: Ոչ մի ինտելիգենտ մատեմատիկոս հալոց օրացորցն ու տոմարագիւտութիւնը չի ուսումնասիրի, որովհետեւ կարդացածը չի հասկանալ: Ոչ մի ինտելիգենտ երաժիշտ հալոց իւնկագուն չի ուսումնասիրի, որ արդ արուեստի արժէքը ուսումնական կերպով լուսաբանէ և ալն, և ալն: — Են, որ մէկը թուենք, հերիք է և ալքանը: Մենք ունինք ինտելիգենտ գրող, բայց չունինք ինտելիգենտ կարդացող, ուր է այն կենդանի մոռաւոր հաղորդակացութիւնը, երբ որ եթէ մէկը գրէր «Հիմք Բլ խօսենք»:

Իսկ բնչ պէտք է լինի լուսաւորելու բուռն ցանկու

թեան և հետք նաև լեզուի արհամարդութեան՝ պառազը, եթէ  
ոչ, փոխանակ ժողովրդական գրականութիւն ծաղկեցնելու,  
բարդաւանել ամբոխ գրականութիւնը. Միաքն և զգացմոն-  
քը պէտք է թուլանան հարստանալու և աղնուանալու հրա-  
նար չունենալով, և պէտք է մնուի միայն բնազդումը, կոյլ  
ընաղջումը. Գիտութեան անունով պոռոտախօսը և լեզուի  
մուգացիկը՝ հետզետէ պէտք է աւելի և աւելի նեղ զծէ իւր-  
բառերի և զաղափարների արդէն իսկ աղքատ շրջանը, աղ-  
քալին բառարանի կէսը խուզելով և ջուրը շպրտելով, պէտք  
է մի անզամ քարոզած շարունակ ծամծմէ, կրինութիւննե-  
րով կշտացնէ, իսկ ուր որ մտաւոր աղքատութիւնը նշմարենվ  
գառնալու վտանդ լինի, իսկոն պէտք է օգնութիւն կանչէ.  
ըստնցքն ու փրփուրը, հուր և սուրը, մի խօսքով ստեղծէ  
և իրավնօրինակ զրուցների, և «Վարձինի մանրանկարների» հոռ-  
գիմաշ գրականութիւնը և էլ դուրս չգալ արդ մոդական շրջա-  
նակից.

Մել կարող են առարկել. «Հասպա Լէօնիքը» Դոքա մի-  
ինչ որ դժբախտ թիւրիմացութեամբ իրանց տաղանդը վաճա-  
ռել են անարդար դատին և լուտանքների դրականութեան-  
ալս բոլորին ջնակելով, կամած չկար, «որ դոքա այլ աւազա-  
նումն են մըրտուել:

U. U.